

Ուզբեկստանի Հանրապետություն

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2019թ. մայիսի 3-ին, Տաշքենդում:

Ստորագրող կողմերն են՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

1) համալիր առողջապահական ծառայությունների տրամադրում (ախտորոշիչ և բուժական)՝ ուղղված առողջության պահպանմանը և վերականգնմանը,

2) դեղագործական գործունեություն,

3) գիտական և բժշկական կադրերի պատրաստում,

4) գիտական մշակումների համատեղ իրականացում,

5) առողջապահության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցության համակարգերի մշակում և ներդրում,

6) առողջապահական համակարգի բարեփոխումներ,

7) փոխօգնություն և փոխգործակցություն տարածքի սանիտարական հսկողության միջոցառումների անցկացում պահանջող հատուկ վտանգավոր վարակների, վարակիչ (մակաբուժային) հիվանդությունների տարածման սպառնալիքի դեպքում,

8) համագործակցություն Միջազգային բժշկասանիտարական կանոնների ներդրման ոլորտում,

9) համագործակցություն մոռացված և էլիմինացված հիվանդությունների կանխարգելման ոլորտում,

10) հիվանդների, այդ թվում՝ հաշմանդամների բժշկական վերականգնում,

11) դեղամիջոցների ու բժշկական տեխնիկայի ստանդարտացում,

12) Կողմերի պետությունների բնակչության առողջության պահպանման ու ամրապնդման ոլորտում ազգային ծրագրերի առաջնահերթ խնդիրների լուծում,

13) բուժաշխատողների և առողջապահական մարմինների ու կազմակերպությունների ղեկավարների շարունակական մասնագիտական զարգացմանն աջակցություն,

14) հանրային առողջության ոլորտում ազգային ռազմավարությունների, ծրագրերի ու նախագծերի մշակման և ամրապնդման նպատակով գիտատեխնիկական փորձի և տեխնոլոգիաների փոխանակում: